Արեւմտյան Հայաստանի
Հայոց Համագումար

Հայրենիք

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

»Միասնական Ջավախք« ժողովրդավարական դաշինքը հայտնում է, որ հոկտեմբերի 10-ի ուշ երեկոյան Երևանի մատույցներում բազմանդամ հանցագործ խմբի կողմից դարանակալ հարձակման են ենթարկվել Դաշինքի նախագահության անդամ Վահագն Զախալյանը, ընտանիքի անդամների և գործընկերոջ՝ Գուրգեն Ճիրինյանի հետ միասին:

Հանցագործ խումբը, նախապես տեղեկացված լինելով Վահագն Զախալյանի և նրա ուղեկիցների ժամանման մասին, դիմավորել է նրանց մայրուղու Աշտարակ-Երևան հատվածում և, հինգ մեքենաներով հետապնդելով, արգելափակել է Երևանի մուտքին: Հանցագործներն անմիջապես թիկունքից մետաղյա ամրանով հարվածել են մեքենայից դուրս եկած Վահագն Զախալյանի գլխին, իսկ նրան պաշտպանել փորձած հորը և ընկերոջը՝ դանակահարել: Վերջինս՝ Գուրգեն Ճիրինյանը հիվանդանոց է տեղափոխվել կյանքին սպառնացող վնասվածքով և վիրահատվել:

Բռնարարքը հաջորդել է Զավախքում զանգվածային խախտումներով անցկացված ՏԻՄ ընտրություններին և դրանց կեղծված արդյունքների վերանայմանն ուղղված ժողովրդական գործողություններին: Ուշագրավ է, որ վերջին օրերին երևանյան մամուլում և հեռուստաթերում հաճախակի են դարձել »Միասնական Ջավախքի« գործունեությունը վարկաբեկող ստահոդ հրապարակումները: Նշված հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ Զավախքը հայթափելու քաղաքականությունն իրականացնող Վրաստանի իշխանությունների կամակատար ուժերը ձգտում են ենթգափոխել երկրամասում ընթացող քաղաքական զարգացումների իրական պատկերը և ապակողմնորոշել հայ հանրությանը:

»Միասնական Ջավախք« ժողովրդավարական դաշինքը խստագույնս դատապարտում է հանցագործ բռնարարքների միջոցով ջավախահայության ներքին խնդիրները լուծելու անարդյունավետ և անհեռանկար վարքագիծը: Դաշինքը դարձյալ միասնության կոչ է հղում Զավախքի կայունությամբ, բարօրությամբ և հայեցի դիմագծի պահպանմամբ շահագրգռված քաղաքական և հասարակական բոլոր ուժերին և անհատ գործիչներին:

»Միասնական Ջավախք«
ժողովրդավարական դաշինք

11 հոկտեմբերի 2006թ.

Արեւմտեան Հայաստանի Հայերուն Ազգային Խորհուրը
haybachdban@wanadoo.fr